ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՈՒՐԲԱԹ, 25 ՕԳՈՍՏՈՍԻ 2017Թ.
№ 29 (447)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Մի անոպատկառ, շռայլ խրախճանք,
Ինչ-որ վերին հանդուգնն օրենքով
Մի տխմարի, մի ցոփ արարածի տված
Աններելի, լռիրբ իրավունք՝՝
Ուրիշների մահու և ժանտախտի
ժամին...

Եղիշե Չարենց

Աղոթարանի լեռնագագաթին հայ զինվորների հաստատուն ներկայությունն է

Հայաստանի Հանրապետության եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ ձգվող պետական սահմանի մի հատվածը համընկնում է Սիսիանի տարածաշրջանի արեւմտյան սահմանին:

Պետական սահմանի պաշտպանության համար հիմնված հենակետերից (մարտական դիրքերից) մեկն էլ Աղոթարանի լեռնագագաթին է՝ 3161.8մ բարձրության վրա:

Մարտական այդ հենակետը տարբերվում է մյուս հենակետերից նախեւառաջ իր իշխող դիրքով: Այդտեղից պարզ, ինչպես ափիդ մեջ, երեւում են մերձակայքում գտնվող եւ՛ մեր, եւ՛ Ադրբեջանի պաշտպանական կառույցները: Առանց հեռադիտակի կարելի է տեսնել հակառակորդի՝ մարտական դիրքեր ելումուտ անող մարդկանց, եկող-գնացող մեքենաներին:

էջ 5

ՍԱՀԱԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. «Փորձում ենք ջրօգտագործողին բացատրական աշխատանքով բերել վճարման դաշտ»

«Սյունիք» ջրօգտագործողների ընկերության գործադիր տնօրեն Սահակ Համբարձումյանի հետ մեր նախորդ հանդիպումը փետրվար ամսին էր, երբ նոր էր նշանակվել այդ պաշտոնում, եւ նոր-նոր էին սկսվել ոռոգման տարեշրջանի նախապատրաստական աշխատանքները: Այժմ ոռոգման տարեշրջանի ամենաեռուն շրջանն է, ինչպես ժողովուրդն է ասում՝ երկնքից կրակ է թափվում: Գործադիր տնօրենի հետ հանդիպեցինք մարզկենտրոնում: Այսօր զանգվածային լրատվամիջոցներում ամենաքննարկվող թեմաներից է ոռոգման ջուրը, եւ մեր զրույցում արծարծվող հարցերի շրջանակը բավականին լայն էր:

- «Սյունիք» ջրօգտագործողների ընկերության կազմավորման փուլը հետեւում է մնացել, - տեղեկացրեց նա: - Նախկին մարզային ջրօգտագործողների ընկերությունները վերածվել են տեղամասերի՝ Սիսիանի, Գորիսի, Մեղրու, քանի որ ընկերության աշխատակազմը Կապանում է, այստեղ տեղամաս ունենալու շքեղություն մեզ թույլ չենք տվել:

- Մեկ անգամ եւս ընթերցողներին հիշեցնենք, թե մարզում որքան հողատարածություն է սպասարկում «Սյունիք» ՋՕԸ-ն:

- «Սյունիք» ջրօգտագործողների միությունը սպասարկում է 1510 հեկտար հողատարածություն, ունենք մոտ վեց հազար բաժանորդ, նախորդ տարվա համեմատ ոռոգելի հողատարածքները եւ բաժանորդների թիվն ավելացել են մոտ տասը տոկոսով: Ոռոգման ջուր է ստանում մարզի 48 բնակավայր:

- Մեր նախորդ զրույցի ընթացքում («Սյունյաց երկիր», 24 փետրվարի 2017թ.) մտահոգություն ունեիք, թե որքանով կառավարման այս ձեւը կարդարացնի իրեն: Ձեր առաջին տպավորություններն ինչպիսի՞ն են:

- Այդ հարցին, նախեւառաջ, ջրօգտագործողները պիտի պատասխանեն, բայց կարող եմ հայտնել, որ մեր ամենօրյա գրանցումների արդյունքներով ջրամատակարարման ժամանակացույցից չենք շեղվել: Չնայած բոլորս տեսնում ենք, թե այս օրերին ինչ աննախադեպ երաշտ է, ըստ այդմ՝ լուրջ ծախսեր եւ ներդրումներ են անհրաժեշտ, կոլեկտիվին մոբիլիզացնել է պետք: Գործն այնքանով է ստացվում նաեւ, որ եթե Սիսիանում մի բանի անհրաժեշտություն կա, Մեղրուց այդ նյութն ուղարկում ենք Սիսիան եւ հակառակը: Այնպես որ՝ ջանում ենք օպերատիվորեն տիրապետել իրավիճակին եւ գործերը կարգավորել: Իհարկե, բարդություններ կան, ինչպես նախորդ անգամ նշեցի, ժառանգել ենք ոռոգման հնացած համակարգ, որ հիմնանորոգման կարիք ունի:

էջ 7

Սյունիքում հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքը մոտենում է ավարտին

Գյուղատնտեսության եւ հատկապես դաշտավարության համար ոչ բարենպաստ տարում հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքը մոտենում է ավարտին: Եռուն աշխատանքները շարունակվում են միայն Սիսիանի եւ Գորիսի տարածաշրջանների բարձրադիր գոտում:

Շատ թե քիչ մնացած եւ չհնձված դաշտերը շարունակում են իրենց վրա կրել մկնանման կրծողների գրոհները. հատկապես հուլիս-օգոստոսին այդ վնասատուները տարերային աղետի պես մի երեւույթ դարձան դաշտերում: Գյուղացիները երբեմն ստիպված են լինում արտը հնձել դեռեւս ոչ լրիվ հասունացած կամ խոնավ վիճակում, որն էլ մեկ այլ խնդրի առաջ է կանգնեցնում մարդկանց:

Դա, իհարկե, տեւական երաշտի միակ հետեւանքը չէ: Գլխավոր հետեւանքը ցածր բերքատվությունն է՝ որոշ բացառություններով:

Եռաբլրի դաշտավայրում «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը հանդիպեց Խոտ գյուղից կոմբայնավար Կամո Միքայելյանի հետ. որդու հետ միասին աշխատեցնում է «Նիվա» մակնիշի 26 տարվա հացահատիկահավաք կոմբայնը:

Ըստ Կամո Միքայելյանի՝ խորհրդային տարիներին այդ մեքենաները խոտանվում էին 4-5 տարի շահագործելուց հետո, իսկ հիմա շատ կոմբայններ 26-40 տարվա աշխատանքային ճանապարհ են անցել: Ֆիզիկական եւ բարոյական մաշվածությամբ այդ մեքենաները հիմա նախեւառաջ պահեստամասերի խնդիր ունեն: Նախկին՝ խորհրդային արտադրության պահեստամասերը չկան, որ ավելի հուսալի եւ դիմացկուն էին: Շրջանառության մեջ են նոր արտադրության պահեստամասերը, որոնք, ցավոք, զուրկ են որակից, ինչն էլ դժվարացնում է կոմբայնի աշխատանքը:

Այդ բոլորով հանդերձ՝ գյուղացին այս տարի կոմբայնի խնդիր չի ունեցել: Նախ՝ ազատագրված տարածքներում երաշտի պատճառով բերքահավաքը բավականին վաղ է սկսվել ու ավարտվել, եւ կոմբայնները ժամանակին տեղափոխվել են բարձրադիր գոտի: Երկրորդ՝ Տաթեւ համայնքը ստացել է ռուսական արտադրության երեք հացահատիկահավաք կոմբայն՝ «Նիվա» մակնիշի՝ ավելի կատարելագործված, որոնք էլ էականորեն թեթեւացրել են հին մեքենաների պահանջարկը:

Հնձի սակագներն էլ մնացել են նույնը՝ Սիսիանի տարածաշրջանում՝ մինչեւ 12 հազար դրամ (1 հա-ի համար), Գորիսի տարածաշրջանում՝ 10 հազար դրամ: Համայնքային սեփականություն հանդիսացող կոմբայնները 2 հազար դրամով քիչ են վերցնում մեկ հեկտարի համար:

Դե ինչ, եւս մի քանի օր եւ հացահատիկային մշակաբույսերի հունձն ավարտված կլինի ու կկարողանանք ամբողջական արդյունքների մասին ավելի փաստարկված խոսել:

Հնձի վերջին փուլին զուգահեռ դաշտերում արդեն մեկնարկել են աշնանացանի աշխատանքները. դրվում է 2018-ի բերքի հիմքը...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հայաստանի եւ Իրանի Ազատ տնտեսական գոտիների միջեւ համագործակցությունն ամրագրվեց հուշագրով

Օգոստոսի 17-ին ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Սուրեն Կարայանը եւ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի խորհրդական, Առեւտրական ազատ գոտիների համադրման խորհրդի քարտուղար Աքբար Թորքանը ստորագրել են համագործակցության հուշագիր: Հուշագրի նպատակն է սահմանել Հայաստանի եւ Իրանի միջեւ ազատ տնտեսական գոտիների ոլորտում համագործակցության հիմնական ուղղությունները, մասնավորապես ապահովել «Մեղրի» ազատ տնտեսական գոտու եւ «Արաս» տնտեսական հատուկ գոտու առաջմղումը եւ սերտ փոխգործակցությունը վերջիններիս զարգացման նպատակով:

Ի թիվս այս նպատակների՝ հուշագրի համաձայն՝ կհաստատվեն կապեր «Մեղրի» ազատ տնտեսական գոտու եւ «Արաս» հատուկ տնտեսական գոտու տարածքներում գործունեություն իրականացնող ընկերությունների, ինչպես նաեւ գոտիները կառավարող մարմինների եւ պետական գերատեսչությունների միջեւ: Նախատեսվում է գործուն աջակցություն երկկողմ եւ բազմակողմ գործարար միջոցառումների եւ ցուցահանդեսների կազմակերպմանը «Մեղրի» ազատ տնտեսական գոտու եւ «Արաս» հատուկ տնտեսական գոտու տարածքներում: Հատուկ աշխատանքային խումբն ընդլայնված կազմով կզբաղվի ազատ տնտեսական գոտիների գործակցության հարցերով, կնշակի համագործակցության ճանապարհային քարտեզը: Սուրեն Կարայանը եւ Աքբար Թորքանը հանդիպման ընթացքում վերահաստատել են, որ նպատակն է արդյունքում ստեղծել ԱՏԳ-ների մեկ ընդհանուր համակարգ, որը կդառնա տարածաշրջանային զարգացման էպիկենտրոնը: Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարը եւ Իրանի նախագահի խորհրդականն ամփոփել են իրանական պատվիրակության այցի մյուս արդյունքները եւս: Նախօրեին Սուրեն Կարայանի եւ Աքբար Թորքանի նախաձեռնությամբ ձեւավորվել էր երեք աշխատանքային խումբ՝ զբոսաշրջության, ազատ տնտեսական գոտիների եւ արդյունաբերության ոլորտներում երկու երկրների համագործակցության հնարավորությունները քննարկելու եւ գործնական առաջարկներ մշակելու նպատակով:

«Ինձ զեկուցել են, որ մեր ստեղծած աշխատանքային խմբերը բավականին արդյունավետ քննարկումներ են ունեցել: Վստահ եմ, որ դրանց արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները եւ այն համագործակցությունը, որի սկիզբը մենք այսօր կդնենք, կխորացնեն հայ-իրանական տնտեսական փոխգործակցությունը», - նշել է Ս.Կարայանը:

ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարի տեղակալ Հովհաննես Ազիզյանը ներկայացրել է խմբերի աշխատանքների արդյունքները եւ գործնական առաջարկները: Մասնավորապես՝ նշվել է, որ քննարկվել եւ պայմանավորվածություններ են ձեռք բերվել արդյունաբերության եւ գյուղատնտեսական ապրանքների վերամշակման ոլորտում համատեղ ձեռնարկությունների ստեղծման ուղղությամբ:

Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի տեղակալ Մեխակ Ապրեսյանն էլ ներկայացրել է զբոսաշրջության ոլորտի աշխատանքային խմբի քննարկումները, որոնք առնչվում են լրագրողների փոխադարձ ճանաչողական այցերին, զբոսաշրջային ցուցահանդեսներին, տարածաշրջանային զբոսաշրջային արդյունքի ձեւավորման եւ արտերկրում դրա առաջմղման հարցերին:

Աքբար Թորքանը շնորհակալություն է հայտնել նախարարին՝ ջերմ ընդունելության համար եւ ավելացրել. ***«««Արաս» առեւտրի ազատ գոտին Իրանի համար Կովկասի եւ ԵԱՏՄ երկրների հետ համագործակցության Իրանի դարպասն է: Հայաստանն անդամակցում է ԵԱՏՄ-ին եւ բավականին լավ հարաբերություններ ունի ԵԱՏՄ անդամ երկրների հետ, եւ մենք հուսով ենք, որ կկարողանանք այդ հանգամանքն օգտագործել Եվրասիական շուկա մուտք գործելու համար»:***

Հանդիպման ավարտին Սուրեն Կարայանը նշել է. **«Մեկ անգամ եւս շնորհակալություն եմ ուզում հայտնել հրավերն ընդունելու եւ Հայաստան այցելելու համար: Մենք բավականաչափ առաջընթաց արձանագրեցինք մեր տնտեսական հարաբերությունների մեջ: Մենք սկիզբ ենք դնում այսօր նոր ծրագրերի: Մենք համոզվեցինք, որ զարգացման լուրջ ներուժ կա արդյունաբերության, զբոսաշրջության ոլորտում: Ինչպես նաեւ, վստահ ենք, մեր ազատ տնտեսական գոտիների համագործակցությունը կբերի մեր երկու երկրների տնտեսական հարաբերությունների շեշտակի աճի»:**

mineconomy.am
17 օգոստոսի 2017թ.

Շնորհավորում ենք քաջարանցիներին՝ քաղաքի օրվա կապակցությամբ

59 տարի առաջ՝ 1958թ. օգոստոսի 21-ին, Հայկական ՍՍՀ գերագույն սովետի նախագահության որոշմամբ Ղափանի շրջանի Քաջարան քաղաքային տիպի ավանը դասվեց Հայկական ՍՍՀ շրջանային ենթակայության քաղաքների թվին:

Փաստաթուղթը ստորագրել է Հայկական ՍՍՀ գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Լ.Հովսեփյանը:

2003 թվականից ի վեր օգոստոսի 21-ը նշվում է Քաջարան քաղաքի օր: Այս անգամ եւս օրվա կապակցությամբ Քաջարանում կազմակերպվել էին տոնական միջոցառումներ:

«Այունյաց երկիր»

Կապանի շոգ ամառը

Առաջիկա երկու ամսում Սյունիքի քաղաքական կյանքի գլխավոր հարցերն են՝ նախ՝ օրվա մարզպետի հետագա ճակատագրի որոշարկումը եւ ապա՝ նոյեմբերի 5-ի ՏԻՄ ընտրությունները խոշորացվող Կապան, Սիսիան, Քաջարան համայնքներում:

Նշված համայնքներից յուրաքանչյուրը, նաեւ ընտրություններին նախապատրաստվելու առումով, իր առանձնահատկություններն ունի եւ կունենա:

Ուշագրավ է հատկապես նախընտրական վիճակը Կապան մարզկենտրոնում:

Գորիսյան իրականությունից դուրս մղվելուց, Սիսիանում շուլուխի առարկա դառնալուց հետո մարզպետը փորձում է ոտքի տակի հողն ամրացնել Կապանում:

Եվ ի՞նչ է արել ու անում այդ ուղղությամբ:

Նախ՝ Կապանի տարածաշրջանին զրկեց իշխող կուսակցության կողմից ԱԺ պատգամավոր ունենալու ստույգ հնարավորությունից, իսկ Կապանն իսկապես բոլոր հիմքերն ուներ ՀՀԿ-ից պատգամավոր ունենալու համար:

Ու ոչ ոք մինչեւ հիմա նրան չի հարցրել՝ այդ ինչպե՞ս ստացվեց, որ անկախության շրջանում Կապանի տարածաշրջանն առաջին անգամ պատգամավոր չունեցավ հայոց խորհրդարանում:

Այնուհետեւ՝ հետեւողական պայքար սկսեց տեղի մտավորականության դեմ:

Գիտությունների Կապանի միակ դոկտոր, պրոֆեսորին ասացին՝ շտապ դիմում գրի՛ր եւ հեռացի՛ր Կապանի ինստիտուտի տնօրենի պաշտոնից, ով էլ մեծագույն հաճույքով գրեց ու հեռացավ՝ չհարցնելով՝ ինչո՞ւ:

Իշխող կուսակցության Կապանի տարածքային կազմակերպության նախագահին օրը ցերեկով ծաղրի ենթարկեցին, իսկ ինքը չհամարձակվեց ծպտուն հանել:

Կապանի ամենափայլուն մտավորականներից մեկին՝ Լեւոն Մարգարյանին, կանչեցին մարզպետարանից եւ ասացին՝ շեֆը քեզ չի ուզում, ինքն էլ չհամարձակվեց հարցնել՝ իսկ ինչո՞ւ: Աննկարագրելի հեզությամբ գրեց դիմումն ու հեռացավ: Եվ ճիշտ է անում սուրճ եփող աղջիկը՝ դպրոցի մասին հեռավոր պատկերացում անգամ չունեցող, որ այդ ամենից հետո հայտարարում է՝ այնտեղ դպրոց չկա, եւ ամեն ինչ զրոյից պիտի սկսեմ: Իսկ մեր հարցին, թե ինչո՞ւ դիմում գրեցիք՝ էքստնօրենը պատասխանեց՝ հոգնել եմ, հանգստանալ եմ ուզում՝ մոռանալով, որ մարդ ասվածը հանգստանալու միայն մի տեղ ունի…

Շինծու մեղադրանքներով աշխատանքից ազատվեց Կապանի բժշկապետ Սմբատ Օրբելյանը՝ հանրապետությունում ճանաչում ունեցող բժիշկը, երեւելի մտավորականը: Ընդորում՝ մինչեւ օրս չի հաստատվել նրա առնչակցությունը ներկայացված մեղադրանքներից որեւէ մեկին:

Կապանյան քաղաքականության հաջորդ ուղղությունը Կապանի ընտրյալ քաղաքապետին իր իսկ համայնքի կյանքից մեկուսացնելն է եւ Կապանում խամաճիկ համայնքապետ ունենալը:

Պատկերացնո՞ւմ եք, երկրի վարչապետը Սյունիքում քննության է առնում նաեւ համայնքների սեփական եկամուտների հավաքման ընթացքը, խնդիրներ առաջադրում այդ ուղղությամբ, բայց քննարկմանը չեն հրավիրում սեփական եկամուտների առումով «չեմպիոն» (ինչպես Կարեն Կարապետյանը կասեր) համայնքի ղեկավարին: Իսկ հարգելի Աշոտ Հայրապետյանը ոչինչ չի ասում՝ մոռանալով, որ ինքն ընտրյալ պաշտոնյա է եւ ներկայացնում է հազարավորների, մոռանալով, որ ինքն ավելի բարձր պաշտոն է զբաղեցնում մեր պետական համակարգում, քան մարզպետը:

Աշոտ Հայրապետյանին կապանյան կյանքից մեկուսացնելու մի նոր դրսեւորման էլ ականատես եղանք վերջերս: Ինքը Կապանի թիվ մեկ դպրոցի կառավարման խորհրդի նախագահն էր: Սակայն հուլիսի 27-ին մարզպետը վերանայեց (իր ունեցած տեղերի մասով) խորհրդի կազմը եւ Աշոտ Հայրապետյանին դուրս թողեց խորհրդից՝ առանց որեւէ պատճառաբանության:

Այդ ոչ սովորական իրադարձությանը նույնպես քաղաքապետը չարձագանքեց:

Աշոտ Հայրապետյանը գոնե գիտի՞, որ իր լռության եւ անհարկի հեզության պատճառների մասին տեղյակ է հանրությունը…

Բայց Կապանը Կապան չէր լինի, եթե պարզունակ այդ խաղերի արդյունքում կորցներ իր արժանապատիվ դեմքն ու դիմագիծը:

Ըստ «Սյունյաց երկիր» թերթի հարցումների՝ համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանն այսօր ավելի մեծ վարկանիշ ունի մարզկենտրոնում եւ հանրային ավելի մեծ աջակցություն է վայելում, քան երբեւէ:

Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ հենց նման հարցումների արդյունքում են բարձր իշխանությունները որոշել նոյեմբերի 5-ին նախապատվությունը տալ Աշոտ Հայրապետյանին: Նույն աղբյուրի համաձայն՝ մերժվել է մարզպետի առաջարկը՝ Կապան խոշորացվող համայնքի ղեկավարի ընտրության ժամանակ մեկ ուրիշին աջակցելու վերաբերյալ: Ավելին՝ հանձնարարվել է նրան՝ իր լիազորությունների սահմաններում աջակցել Աշոտ Հայրապետյանի ընտրությանը:

Անշուշտ, դա չի նշանակում, որ նախընտրական խարդավանքները Կապանում ավարտվել են: Ընդհակառակը՝ ամեն ինչ նոր-նոր է սկսում, եւ չի բացառվում իրադարձությունների զարգացման ցանկացած տարբերակ: Այդ հանգամանքը, անտարակույս, հաշվի կառնի կապանցի ընտրողը եւ կհիշի, որ, ի վերջո, ինքն է որոշելու Կապան բազմաբնակավայր համայնքի ղեկավարի ով լինելը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մի անհաջող PR ակցիայի մասին

Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը (այսուհետ՝ մարզպետ) վարչապետի՝ Սյունիքի մարզ կատարած այցի ժամանակ առողջապահական համակարգի փոփոխությունների մասին խոսելիս նշեց, որ վճարովի ծառայություններից մուտքագրված գումարներն ընթացիկ տարվա առաջին կիսամյակում արդեն իսկ կազմել են 175.3 մլն դրամ, որը գերազանցում է նախորդ ամբողջ տարվա մուտքերը մոտ 50 մլն դրամով: Եվ սա նա բարձրաձայնեց անթաքույց հպարտությամբ՝ որպես աշխատանքների արդյունավետության բարձրացման արդյունք:

Փորձենք հասկանալ՝ ի՞նչ է թաքնված այդ թվերի հետեւում:

Առաջին հերթին պետք է հիշել, որ բժշկական ծառայությունների ֆինանսավորման երեք մեխանիզմ է գործում Հայաստանի Հանրապետությունում՝ 1)պետպատվեր, երբ ծառայությունների համար վճարում է պետությունը, 2)համավճար, երբ պետությունն ու պացիենտը կիսում են վճարի բեռը, ու 3)վճարովի ծառայություններ, երբ ամբողջությամբ

վճարում է պացիենտը: Մարզպետի կողմից հնչեցրած թվերը տարեկանի բերելով՝ տպավորիչ աճ կստանանք: Սա կշարունակվի այնքան, քանի հաշվի չենք առնում պետության կողմից տրամադրած ֆինանսավորումը, որը գերազանցում է տարեկան 1մլրդ 500մլն դրամը. վերջինիս դեպքում միայն 13% աճ է ստացվում: Այսինքն՝ եւս մեկ անգամ հանգում ենք մի իրավիճակի, երբ պետության կողմից տրամադրվող ֆինանսավորումն անտեսվում է. կարծես թե այդ փողերը տարբերվում են վճարովի ծառայությունների դիմաց ստացված փողից: Իրականում, տարբերություն չկա. մեկը քաղաքացիների կողմից ուղղակի վճարված գումար է, մյուսը՝ հարկերի տեսքով վճարված փող:

Այս ամենի ֆոնին ուշագրավ է նաեւ այն, որ չի խոսվում ո՛չ մատուցած ծառայությունների ընդհանուր ծավալի աճի, ո՛չ ծախսերի նվազման, ո՛չ մատուցած ծառայությունների որակի բարձրացման, ո՛չ էլ քաղաքացիների կողմից բուժհաստատության նկատմամբ վստահության մեծացման մասին: Խոսվում է միայն վճարովի ծառայություններից գանձված գումարի աճի մասին: Հարց է առաջանում. մուտքագրված գումարների բարձրացումը քանակի՞, թե՞ գնի աճի արդյունք է, քանի որ ցանկացած եկամուտ քանակի ու գնի արտադրյալ է: Այստեղ պետք է մտապահել երկու փաստ. 1)քանզի խոսվում էր միայն վճարովի ծառայությունների ծավալի աճի, այլ ոչ թե ծառայությունների ընդհանուր ծավալի աճի մասին, կարելի է եզրակացնել, որ ընդհանուր ծառայությունների ծավալի էական աճ տեղի չի ունեցել, այլապես նման հաջողությունը բարձրաձայնելու հնարավորությունը բաց չէին թողնի, 2)բժշկական ծառայությունները ոչ էլաստիկ են գնի նկատմամբ, այսինքն՝ ծառայության գնի փոփոխությունը չի հանգեցնում պահանջարկի էական փոփոխության: Վերոնշյալ փաստերի համադրման արդյունքում եկամտի աճի երկու հնարավոր պատճառ է առաջ գալիս. պետպատվերի փոխարեն վճարովի ծառայություններ են մատուցվել, կամ/եւ տեղի է ունեցել վճարովի ծառայությունների գների բարձրացում:

Երկու դեպքում էլ գրանցված հասույթի աճը պարծենալու առիթ չի կարող լինել: Ստացվում է՝ եթե նույն միտումը շարունակվի, ապա ծառայությունների համադրելի ծավալ տրամադրելով՝ 2017թ. արդյունքներով բնակչությունից կհավաքագրվի հավելյալ 225մլն դրամ: Հիվանդության ժամանակ ընդունված չէ խնայել. մարդիկ է՛լ ավելի քիչ կսնվեն, քիչ կհագնվեն, երեխաների կրթության ծախսերը կնվազեցնեն: Վճարովի ծառայությունների գներն ու գների փոփոխությունը, ի պաշտոնե, հաստատվում են մարզպետի կողմից, ու, հետեւաբար, խելամիտ մարդն ուղղակի կլռեր: **Իսկ մարզպետը հպարտանում է դրանով… Այսինքն՝ մարզպետը հպարտ է, որ պատերազմող պետության սահմանամերձ մարզում, որտեղ սուր սոցիալական հարցեր են առկա, որտեղ հատկապես վերջին մեկ տարում բնակչության կենսամակարդակի բարձրացում եւ աղքատության նվազում տեղի չի ունեցել, բնակչության համար հավելյալ ծախսեր է ստեղծել: Ու սա արդեն ոչ թե արդյունավետության աճ է հիշեցնում, այլ պետության հիմքերը խարխլող քաղաքականություն:**

Այդ ամենը հերթական համատարած խեղաթյուրանքի հետեւանք է. շուկայական տնտեսությունը, իր բոլոր առավելությունների հետ մեկտեղ, ունի էական թերացումներ. օրինակ՝ հանրային բարիքների թերարտադրությունը: Ու եթե որպես հանրային հատվածի արդյունավետության ցուցանիշ ընդունենք շահույթը կամ հասույթը, ապա հաջորդ քայլով պետք է հրաժարվենք բանակից: Ի վերջո, բանակը հասույթ/շահույթ չի առաջացնում: Հանրային հատվածում չի՛ կարելի արդյունավետության ցուցանիշ ընդունել շահույթը կամ հասույթը՝ առանց ընկալելու եւ գնահատելու դրանց ազդեցությունը հասարակության վրա:

Հ. Գ. Եթե մի պահ փորձենք չկենտրոնանալ իրավիճակի բարոյական ու սոցիալական կողմերի վրա, ապա ստացվում է, որ ոչ էլաստիկ պահանջարկով մենաշնորհային շուկայում ունենալով բացարձակ վերահսկողություն բուժհաստատությունների ու գների սահմանման վրա, եւ նպատակ հետապնդելով մաքսիմալացնել հասույթը՝ նրանք ի վիճակի են եղել ապահովել ընդամենը 13% աճ:

ԱՐԹՈՒՐ ՕՐԲԵԼՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԵՍՐՈԲՅԱՆ. «Համայնքների խոշորացմամբ գյուղացու եւ տեղական իշխանության միջեւ մի նոր եւ արհեստական, ինչ-որ առումով անհաղթահարելի ջրբաժան է առաջանում»

Քարքարոտ, անանցանելի ճանապարհով գնում ենք Սիսիանի տարածաշրջանի Սալվարդ գյուղ: Գնում-գնում ենք... Վերջապես... Ահա եւ գյուղն ու նրա կենտրոնը (մարդիկ գյուղի կենտրոնը համարում են գյուղապետարանի շենքի մոտ գտնվող տարածքը):

Այստեղ դաղձի ծով է, դաղձի համբույր ու դաղձի գգվանք: Եվ օրվա օրհնանքն ասես կաթ-կաթ թափվում է դաղձի թփերի վրա եւ տարածվում գյուղով մեկ, ու օրվա օրհնությունն ամեն տուն է մտնում: Ու նաեւ այն տները, որոնց տերերը գնացել են՝ ուր նրանց աչքը կտրի... Օրվա օրհնությունն այդ լքված տները կպահի՝ մինչեւ տերերը հետ կդառնան, քանի որ մի օր անպայման «Հայաստան ասելիս» նրանց «շրթունքը» ճաքելու է, ինչպես պատահեց Նարեկի հետ: Նարեկն էլ, որ Սալվարդը թողել-գնացել էր Ռուսաստան՝ բախտ որոնելու, մի օր հիշեց Համո Սահյանի արձանագրումը՝

«Ախր ուրիշ տեղ հայրենիք չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա....»:

Եվ վերադարձավ Սալվարդ՝ իր ծննդավայր, ախր Սահյանն իրենց գյուղով է Աղոթարան բարձրացել ու մինչ բարձրանալը՝ «լուսաբացի թավշյա փեշով» սրբել է «ծիր կաթինոտ ճակատը» Սալվարդի, խմել սառը ջուրը Սալվարդի ու հենց Սալվարդում է բանաստեղծը նկատել, թե ինչպես են «նախաստեղծ սիրով իրար փնտրում խռով քարայծն ու մարդը Սալվարդի»:

Նարեկն աշխատում է մոտակայքում տեղակայված սահմանապահ հենակետերից մեկում, դիպուկահար է: *«Սալվարդը մեր հիմնությունն է, մեր խորհրդանիշը»*, - կարդում եմ նրա հայացքում եւ հասկանում նաեւ, թե ինչու դարձավ զինվորական: Ու եկել է, որ պաշտպան կանգնի սարերի խռովքին եւ անհուն տիեզերքի մեջ իր հենման կետը գտնի: Գտել է, ամուսնացել, հիմա երեխա ունի: Հայրը վաստակաշատ մեխանիզատոր է, մայրը՝ Նունե Ավետիսյանը, վաճառող է:

- *Պարտքագուցակ ունե՞ք,* - հարցնում եմ Նունե Ավետիսյանին:

- *Իհարկե, առանց դրա ոչ մի խանութ չի գոյատեւի: Պարտքով չտալ չենք կարող: Մարդը սոված է, փող չունի, թողնենք սոված՞ մնա: Մի օր կվերադարձնի պարտքը...*

Ու պատմում է, որ Սալվարդն այլեւս առաջվանը չէ: Առաջներում այստեղ օրը բացվում էր լավաշ հացի բուրմունքով: Իսկ բուրմունքն այդ գնում-հասնում էր Աղոթարան: Հիմա գյուղում լավաշ թխում է միայն մեկ հոգի, մի քանիսն էլ էլեկտրական վառարանում են հաց թխում, մյուսներն էլ խանութից են հաց գնում:

- *Հետս չէ հաց թխելը,* - *ասում է Նունեն,* - *ոնց որ գլուխդ մտցնես հրե լավայի մեջ, ո՞նց դիմանաս այդ ջերմությանը: Քարից հաց ենք համում: 2017-ը գյուղացու տարի չի: Հուլիսից անձրեւ չի գալիս, կարկուտ էլ եկավ, արար ածխարհ չորացել է, կովն էլ կաթ չի տալիս, խոտ չկա դրսում...*

Հետո փոխում է զրույցի ուղղությունն՝ ուրախ նոտաներով:

- *Ուզում ենք տրակտոր գնել. վարկ կվերցնենք, տղաս զինվորական է, կկարողանամ փակել, վարկի տոկոսների տակ չենք մնա: Դուք որտեղի՞ց եք, բողոքի գիրք բացեցի ու մոռացա հարցնել այդ մասին:*

Իմանալով, որ «Այունյաց երկիր» թերթից ենք՝ իսկույն մտավ խանութ ու բերեց թերթի վերջին համարը:

- *Ուրեմն դուք այդ թերթից եք: Ապետնակ Ավետիսյանի թերթն է (*ցույց է տալիս թերթի համարը. Ա.Մ.*): Նա հիմա յայլաղում է: Ժողովուրդն էլ նրա բացակայությունից օգտվում է, թերթը ձեռքից ձեռք է անցնում, կարդում են, ծանոթանում մարզի անցուդարձին...*

Սալվարդի գյուղապետ Վարդան Մեսրոբյանը ցավով պատմում է, որ հիմա գյուղում 200 մարդ է ապրում: 1992թ. այստեղ 92 ծուխ է եղել, հիմա՝ 53: 1941թ. գյուղն ունեցել է 1080 բնակիչ, 1956-ին՝ 550: Տարեցտարի պակասել է բնակչության թիվը, եւ գյուղը ներսից փոքրանում-փոքրանում է, կուչ գալիս, խեղճանում: Անցած եւ այս տարի գյուղի դպրոցը շրջանավարտ չի տվել, բայց եկող տարի 4-ը կունենա, իսկ 2017-2018 ուսումնական տարում դպրոցն 1-ին դասարանցի երկու աշակերտ կունենա: Իսկ ընդհանուր առմամբ, գյուղի դպրոցն ունի 14 աշակերտ:

Գյուղապետի որդին՝ Արթուրը, սովորում է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի վարժարանում:

- *Եթե ինստիտուտն ավարտեմ եւ Սիսիանի բանկերից որեւէ մեկում աշխատանք գտնեմ, կվերադառնամ,* - ասում է Արթուրը:

Հայրն էլ թե՝

- *Կգաս, բայց Սիսիանում կապրես, քո երեխան գյուղում չի ապրի..*

Գյուղապետ հոր խոսքում դառնություն եմ զգում, ափսոսանք. նրա մեջ հայրը չէր խոսում, այլ գյուղի ապագայով մտահոգ մարդը, որովհետեւ Սալվարդը, որքանով հասկացանք, նրա հոգու անառիկ ամրոցն է:

- *Երբ Համո Սահյանը գալիս էր գյուղ, հանդիպում էր ժողովրդին, խոսքի բռնվում մարդկանց հետ: Հիշում եմ, մի օր եկավ հանդիպեց տնտեսության կթվորների հետ ու նրանց ժամացույց նվիրեց:*

Մի պահ լռելուց հետո կրկին վերադառնում է մեր օրերը:

- *Սալվարդի ջուրը լավն է, սառնորակ, ոչ մի սառնարանում ամռանն այսպիսի սառը ջուր չես գտնի: Հետո ասում է, որ գյուղում մարդիկ անասնապահությամբ, հողագործությամբ են զբաղվում: Գյուղում բոլորը կով ունեն, բացի երեք ընտանիքից: Մարդիկ կան, որ 100-150 գլուխ մանր եղջերավոր անասուն են պահում, ընտանիք էլ կա՝ 16-17 կով ունի: Կաթի մթերման խնդիր չունենք. Գորիսի «Էլոլա» գործարանը հուսալի գործընկեր է: Լիտրը 130 դրամով կաթը վերցնում է, ժամանակին վճարում: Անասնապահի օրն էլ սարվորների համար օղի ու սուրճ էր ուղարկել:*

Գյուղի անասունների մոտ հիվանդություններ ավանդաբար քիչ են լինում՝ շնորհիվ ալպիական մարգագետինների եւ սառնորակ ջրերի: Ափսոս՝ դրսից վարձակալողներ չկան: Իսկ սալվարդցիք այդքան արոտավայրերը չեն կարող օգտագործել, քանի որ պակասել է ե՛ւ մանր, ե՛ւ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը: Ուրախալին այն է, որ միջազգային կառույցները յայլաղներում անասունների համար ստեղծել են մակատեղիներ, ջուր խմելու պայմաններ, անասնապահների կացարան...

Գյուղապետ Վարդան Մեսրոբյանը, իսկապես, մարդու, գյուղապետի փնտրված տեսակ է մեր օրերում՝ հայրենի հողուջրին նվիրված: Շատ լավ գիտի գյուղի բոլոր հանդամասերը, գիտի գյուղի հետ կապված բազում ավանդազրույցներ: Պատկերացնում է սահմանապահ Սալվարդի առաքելությունը: Չափից ավելի համեստ այդ մարդը նաեւ գյուղի առջեւ ծառացած հիմնախնդիրներն է թվարկում: Եվ առաջին հիմնախնդիրը Հացավանից մինչեւ Սալվարդ ձգվող ավտոմայրուղու ամոթալի վիճակն է, որ վերջին անգամ կարգի է բերվել 1990-ականների վերջին՝ ընտրություններից մեկի առիթով:

Գյուղապետը վերապահումով է վերաբերվում համայնքների խոշորացման՝ Սյունիքում, նաեւ Սիսիանի տարածաշրջանում իրականացվող ծրագրին:

- *Ես տեղյակ չեմ հանրապետության մյուս վայրերում իրականացված խոշորացման արդյունքներին, չեմ էլ կարծում, որ կառավարությունն այս փուլում հետ կկանգնի բազմաբնակավայր համայնքներ ստեղծելու ծրագրից,* - ասում է Վարդան Մեսրոբյանը: - *Չգիտեմ՝ ինչ կտա խոշորացումը գյուղին կամ գյուղացուն, բայց մի բանի հասատս կբախվենք՝ գյուղացու եւ տեղական իշխանության միջեւ մի նոր եւ արհեստական, ինչ-որ առումով անհաղթահարելի ջրբաժան կառաջանա, մինչդեռ բարեփոխումները պետք է մարդուն եւ իշխանությանը մերձեցնող նպատակ ունենային նախեւառաջ, որ երկիրն էլ ուժեղանար, մարդն էլ իրեն պետության մաս զգար:*

Գյուղապետը թվարկում է գյուղացիներին մտահոգող մյուս հարցերը եւս՝ լուծումների իր պատկերացմամբ: Բայց այդ լուծումները, կարծես, պատրանք են թվում ավելի շատ: Այլապես գյուղն այդպիսի արագությամբ չէր խեղճանա ու նահանջի: Եվ ափսոս, որ շատերն այդպես էլ չեն ուզում հասկանալ՝ Հայաստանը հզոր կարող է լինել միայն ու միայն լեռնային գյուղերով, սահմանապահ բնակավայրերով...

Գյուղապետ Վարդան Մեսրոբյանի եւ Նարեկ զինվորականի հետ գնում ենք յայլաղ, որտեղ գտնվում են գյուղի անասնապահները: Այդտեղ հանդիպում ենք Ապետնակ Ավետիսյանին՝ «Այունյաց երկիր» թերթի բաժանորդին: Շնորհավորում ենք Անասնապահի օրվա առթիվ, որ մեկ օր առաջ էր նշվել:

- *Տեղյակ չէինք, թե չէ լավ կնշեինք, բայց դե ամեն օր մեզ համար տոն է, օդը՝ մաքուր, ջուրը՝ սառը:*

- *Մենք էլ մտածում էինք, թե այսօր Ձեզ հետ կշարունակենք երեկվա տոնական օրը,* - փորձում ենք կատակել:

- *Հիմա գառ կմորթեմ, եւ կշարունակենք տոնը...*

Խոսում է «Այունյաց երկիր» թերթի մասին, նշում, որ այն իրական է ներկայացնում կյանքը՝ առանց գունազարդումների եւ աղավաղումների:

- *Ինչպե՞ս եք ապրում,* - հարցնում ենք:

- *Վատ չենք ապրում, հացն ունենք, սուրճ ունենք, ջուրն ու կրակն էլ ունենք, դե մսի մասին չեմ խոսում, թերթն էլ սանում ենք՝ իրազեկվում..Բայց դե երաշտը խեղդում է, շուրջբոլորը չորացել է, դեռ լավ է, որ անասունների համար մնալու տեղ կա, սաստիկ շոգին հեռու չեն գնում, մնում են կացարանում: 150 գլուխ ոչխար եմ պահում, խուզել եմ, բուրդը վառել, գնող չկա: Ով է տեսել՝ մարդ իր քրտինքով ստեղծած ապրուստը կրակին տա, սիրտդ ցավում է, հոգիդ մղկտում է, բայց, ուրիշ ճար չունես:*

Տղան՝ Արթուրը, ութ տարեկանից սարերում է՝ հոր հետ: Ապետնակը կասկածում է, որ բանակում ծառայելուց հետո տղան կշարունակի իր գործը:

- *Հիմիկվա ջահելները չեն հասկանում, որ եթե անասուն չպահեն, հող չմշակեն՝ չեն կարող ընտանիք պահել, տուն-տեղ դնել: Նրանց մեջ սեր չկա, հեսաբրդություն չկա գյուղի գործերի հանդեպ, գնում են Ռուսաստան, գիտեն թե այնտեղ դյուրին է փող վաստակելը:*

Անդրանիկ Ավետիսյանը 80 գլուխ մոզի է պահում: Միայն իր սեփականը չէ:

Խնդիրներից ենք հարցնում:

- Անասունների մոտ հիվանդություն չկա, բայց մոզիները քոռանում են, չգիտենք արեւի՞ց է, ճանճերի՞ց է , - Անդրանիկի փոխարեն ասում է Ապետնակը:

Գայլեր կա՞ն, նեղո՞ւմ են. հարցին ի պատասխան Ապետնակն ասում է.

- *Գայլն ի՞նչ է, որ չլինի, արջ էլ կա:*

- *Վնասե՞լ են անասուններին, որսորդական հրացան ունե՞ք, - հարցնում ենք:*

- *Չէ, որսորդական չունենք, չենք էլ ուզում: Մեր որսորդականը պայթուցիչն է, էն որ երեխաները «բոմբ» են ասում: Հենց գայլերին նկատում ենք, պայթուցիչը գործի ենք դնում, եւ գայլերը փախչում են:*

Անասնապահները մեզ համար սուրճ են պատրաստել: Մտնում ենք տնակը՝ սուրճը վայելելու: Թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը թե՝ Ալվարդ, արի այստեղ, տես ինչ եմ գտել: Ինձ թվաց, թե նոր մոլորակ է հայտնաբերել: Արագ մտա վրան: Նրա գտածը բանաստեղծությունների ժողովածու էր: Իրոք, սարի գլխին քիչ հանդիպող երեւույթ... Ում մտքով կանցներ: Պարզվեց, որ Անդրանիկի եղբոր՝ Կարենի գիրքն է, գրադարանից է վերցրել:

Եվ արտասանում է Վահան Տերյանի «Ցնորք» բանաստեղծությունը.

...Ախ, ոսկով են գնում քեզ
Անհաս ցնորք իմ հոգու...

Սիրահարվա՞ծ ես. հարցին Կարենը գլխով արեց՝ դրական պատասխան արտահայտելով:

- *Որտեղի՞ց է:*
- *Սիսիանից է...*
- *Սեւուկ աղջի՞կ է, թե՞:*
- *Ոչ, ոսկեգույն մազերով:*
- *Առաջարկություն արե՞լ ես:*
- *Դեռ՝ ոչ: Մի շաբաթ հետո:*

Թե ինչու մի շաբաթ հետո, չեմ հարցնում, որպեսզի զահլա տանողի տպավորություն չթողնեմ, թեեւ, գուցե արդեն զահլան տարել եմ:

Ու այստեղ՝ Աղոթարանի ստորոտում, հաճելի է գիտակցել, որ հայ մարդու տեսակը չի տարրալուծվի ժամանակի քաոսում, քանզի նրա այդ տեսակում նաեւ Կարեն անունով տղա կա, որի մի ձեռքում անասնապահի մահակն է, մյուս ձեռքում՝ գիրքը՝ հայոց կենաց ծառի կենարար երակը...

Աղոթարանի լեռնագագաթին հայ զինվորների հաստատուն ներկայությունն է

էջ 1

Արցախյան պատերազմի առաջին շրջանում այդ բարձունքի համար մարտեր են մղվել, հայ զինվորի արյուն է թափվել այդտեղ. 1992-ին նահատակվեց բռնակոթցի Ահարոն Շահնազարյանը, ում հիշում են մարտական դիրքում հերթապահող զինվորները:

1993-94-ին, այդուհանդերձ, տեղանքն ադրբեջանցիների վերահսկողության ներքո էր, իրենք էին իշխում բարձունքում, ինչը վտանգավոր էր մեզ համար: Այդ դիրքից դժվար չէր հրետակոծել եւ՛ Սիսիան քաղաքը, եւ՛ տարածաշրջանի գյուղերը (բացի Ջորերի գյուղերից): Ուստի եւ խնդիր էր դրվել վերադարձնել Աղոթարանի լեռնագագաթը: Խնդիրը լուծեց Սիսիանի գունդը՝ հրամանատարությամբ Հովիկ Ազոյանի: Այնպես որ՝ 1995-ից Աղոթարանի լեռնագագաթը մեր ձեռքում է:

Դրանից հետո է, որ Մատաղ աղբյուրից մինչեւ լեռնագագաթ մեքենահարմար ճանապարհ, նաեւ ինժեներական հուսալի կառույցներ են պատրաստվել:

Առհասարակ մարտական այդ դիրքը փոքրիկ մի բնակատեղի է հիշեցնում՝ կենտրոնում հին մատուռն է՝ առանց ծածկի, դարերի խորքից եկող զարմանահրաշ խաչքարերով: Կողքին ծածանվում է հայոց եռագույնը, որ բարձրացվել է վերջերս՝ արմատներով սալվարդեցի, ռուսաստանաբնակ Կարեն Օսիպովի նախաձեռնությամբ:

Մարտական այդ դիրքի տարածք մտնելիս նախեւառաջ աչքի է զարնվում մաքրությունը. ոչ մի ավելորդություն, նույնը՝ փոքրիկ զորանոցում, խոհանոցում…

Ոգեւորիչ էին հատկապես մարտական դիրքում հերթապահող զինվորականների տրամադրությունը, վստահված դիրքը պաշտպանելու նրանց պատրաստակամությունը: Մարտական այդ ոգին նկատելի էր եւ՛ հենակետի պատասխանատու, լեյտենանտ Դավիթ Յաղումյանի, եւ՛ ժամկետային զինծառայողների, եւ՛ պայմանագրայինների շրջանում:

Հենակետի բոլոր զինվորականների հետ, բնականաբար, չկարողացանք հանդիպել. նրանք ծառայության մեջ էին տվյալ պահին: Բայց մի խումբ զինվորականների հետ սրտառուչ զրույցներ ունեցանք: Տեղին ենք համարում հիշել նրանցից յուրաքանչյուրին. *Այվազյան Կարեն (ժամկետային զինծառայող, Արտաշատից), Հովհաննիսյան Գեւորգ (պայմանագրային զինծառայող, Ույծից), Բարսեղյան Սուրեն (պայմանագրային զինծառայող, Հացավանից), Լալայան Գաբրիել (պայմանագրային զինծառայող, Լեռնաշենից), Մանուկյան Թաթուլ (պայմանագրային զինծառայող, Սիսիանից), Հովհաննիսյան Գրիշա (ավագ լեյտենանտ, հենակետի ավագ, Սիսիանից), Շահնազարյան Արայիկ (պայմանագրային զինծառայող, Բռնակոթից), Ջահիկյան Ալիկ (պայմանագրային զինծառայող, Հացավանից), Մկրտչյան Միխայել (ժամկետային զինծառայող, Շինուհայրից), Մրազ Դալոյան (ժամկետային զինծառայող, Հոկտեմբերյանից) եւ իհարկե Դավիթ Յաղումյան՝ լեյտենանտ, հենակետի պատասխանատու, Ախլաթյանից…*

Չէր կարելի չնկատել՝ պայմանագրայինների ներկայությամբ ժամկետային զինծառայողներն ավելի վստահ ու հաստատակամ էին: Եվ, որ կարեւոր է, ժամկետայինների ու պայմանագրայինների միջեւ ջերմ հարաբերություններ էին իշխում:

Եզդի Մրազ Դալոյանը, ով գնդացրորդ է եւ զորակոչվել է յոթ ամիս առաջ, հետաքրքիր պատասխան տվեց մեր հարցին՝ արդյո՞ք դժվար չէ ծառայել այս բարձունքում ցրտաշունչ ձմռանը:

- Մեծ սիրով եմ ծառայում, իմ հայրենիքի սահմաններն եմ պաշտպանում, եթե ոչ ես, ապա ուրիշ ո՞վ պիտի այստեղ կռիվ տա ձմռան բուքուբորանի հետ, - ասաց Մրազ Դալոյանը:

Իսկ գնդացրորդ Միքայել Մկրտչյանին, ով Շինուհայրից է, ճանաչեցինք. նրա պապի՝ Բահադուր Մկրտչյանի հետ Շինուհայրի ռետինե կոշիկի գործարանում ժամանակին աշխատել ենք. քիմիական արդյունաբերության լավ մասնագետի համբավ ուներ, Լենինգրադում էր բարձրագույն կրթություն ստացել:

Միքայելը հուզիչ կենսագրություն ունի. 1998-ին, երբ ինքը լույս աշխարհ էր գալիս, մայրը՝ Վարդուշը, ծննդաբերելիս մահացավ…

Բահադուր պապի հոգածությամբ է մեծացել Միքայելը, պապը հիմա էլ ժամանակ առ ժամանակ այցելության է գալիս սահմանապահ թոռանը:

Միքայել Մկրտչյանի դեմքից հպարտություն, վստահություն էին ծորում: Ավելին՝ իր վեհանձնությամբ վարակում էր զրուցակցին:

Նա կոչ ուղղեց բոլոր տարիքակիցներին՝ «*Անպայման եկեք ծառայության, «դուխով» եղեք, մենք պիտի պաշտպան կանգնենք մեր պետական սահմանին…*»:

Հացավանցի պայմանագրային զինծառայող Սուրեն Բարսեղյանն էլ, պարզվում է, տեղյակ է Աղոթարանի հետ կապված, դարերով հյուսված ավանդազրույցներին. տատից է լսել: Նա ցույց տվեց լեռան արեւմտահայաց կողմում գտնվող (գագաթից մոտ 100մ ներքեւ) Աղջիկ-տղա անվանյալ քերծը: Ըստ Սուրենի՝ մուսուլման տղային եւ քրիստոնյա աղջկան, ովքեր սիրում էին միմյանց, չեն թողել ամուսնանալ՝ պատճառ բռնելով դավանանքի տարբերությունը: Բայց նրանց սերն անկեղծ էր, եւ չէին ուզում հասկանալ, որ դավանանքի տարբերության պատճառով չպիտի բաժանվեն: Եվ որոշեցին միանալ հանդերձյալ աշխարհում՝ այդ քերծից՝ ձեռք ձեռքի տված, իրենց ցած գլորելով, ինչի համար էլ քարաժայռը մինչեւ հիմա կոչվում է Աղջիկ-տղա քերծ:

Հայ-նախիջեւանյան պետական սահմանի օպերատիվ վիճակը ներկայացրեց հենակետի պատասխանատու Դավիթ Յաղումյանը:

Լեյտենանտը ժամանակին ավարտել է Արցախի պետական համալսարանը, հետո վերապատրաստվել զինվորական գործի համար եւ իր կյանքը կապել հայոց ազգային բանակի հետ:

Հենակետում տիրող կարգուկանոնից, զինվորների ոգուց եւ մարտական պատրաստականությունից, անշուշտ, կարելի էր պատկերացում կազմել Դավիթ Յաղումյան սպայի մասին: Նա ոչ միայն հրամանատար է, այլեւ զինվորի ծնող, ավագ ընկեր ու բարեկամ: Նրա համար երկրորդական հարց չկա՝ զինվորի սննդից, զինվորների հարաբերություններից, դեղատնից, զինվորների հիգիենիկ վիճակից մինչեւ առաջնագծում մարտական հերթապահություն իրականացնող զինվորի տրամադրություն…

- Պետական սահմանի այս հատվածում օպերատիվ իրավիճակը խաղաղ է, կրակոցներ չկան,- ասաց Դավիթ Յաղումյանը: *- 2016-ի ապրիլյան օրերին նույնպես այստեղ հարաբերական անդորր էր, բայց մենք պատրաստ էինք ամեն մի զարգացումի: Այսօր էլ պատրաստ ենք, հարաբերական անդորրը չի կարող մեր զգոնությունը թուլացնելու պատճառ լինել:*

Ըստ լեյտենանտի՝ ձմռանը, բնականաբար, որոշ դժվարություններ են առաջ գալիս՝ ցրտաշունչ եղանակ, առատ ձյուն, բուքուբորան, ճանապարհների վիճակ… Բայց արդեն հարմարվել են: Եվ պետական սահմանն այն տեղը չէ, որտեղ զինվորը դժվարությունների առաջ պետք է ընկրկի:

Թեեւ օգոստոս է, բայց հենակետում արդեն պատրաստվում են առաջիկա ձմռանը. վառելափայտն արդեն տեղ է հասցվել, հենակետն ապահովված է էլեկտրական հոսանքով, ճանապարհներն էլ՝ կարգի բերված …

Օրվա վերջին զինվորները մեզ հրավիրեցին համատեղ ընթրիքի՝ այդ կողմերին հատուկ հյուրասիրությամբ: Դա նաեւ առիթ էր տեսնելու, թե ինչպես են սնվում առաջնագծում մարտական ծառայություն իրականացնող մեր զինվորները. ծնողները մտահոգվելու կարիք չունեն:

Հրաժեշտից առաջ մեր միջեւ, կարծես, յուրօրինակ հոգեհարազատություն էր ստեղծվել. մենք ոգեւորված էինք նրանց քաջարի պահվածքով, իրենք էլ՝ մեր այցելությամբ: Որերորդ անգամ տեսանք, զգացինք այն վիթխարի պատասխանատվությունը, որ դրված է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անվտանգությունն ապահովող զինվորականի վրա: Եվ պատահական չէր ամենեւին, որ մեր հրաժեշտի ինքնաբուխ խոսքը հենց այսպես էլ հնչեց՝ «*Հայաստանը դուք եք…*»:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մենք դեռ ճամփա ունենք անցնելու: Թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը մեկ օր առաջ է նպատակ դրել՝ բարձրանալ Աղոթարան՝ Բարձրյալի հետ զրուցելու, սահյանական ոգուց «ջուր խմելու»... Հրաժեշտ ենք տալիս սարվորներին: Նայում եմ Կարենին եւ լուռ խոստանում՝ վերադառնալուց Սիսիանում կփնտրեմ քո ոսկեվարս աղջկան, նրան կպատմեմ քո մասին.... Հեշտ չէր վերելքը, բարձրանում ենք, բարձրանում... Գյուղապետ Վարդան Մեսրոբյանն ու զինվորական Նարեկը մեզ հետ են, չենք մոլորվի: Քարքարոտ ճանապարհը «Նիվայի» «միսն» ուտում է: Սամվել Ալեքսանյանը երկու ոտքը դրել է մի չմուշկում՝ անպայման Աղոթարան պիտի բարձրանանք: Ճանապարհի ցից քարերն ուր որ է կմտնեն մեքենայի անիվների մեջ, եւ մեքենան...

Մեքենան տեսնելով՝ կաքավների երամը թռավ խոտերի մեջից... Ու դարձյալ հիշում եմ Սահյանին՝

Հավք ուզեիր, նա քեզ կտար
Մեկի տեղ հազարը,
Հավքի բույն էր փեշից-կտար
Աղոթարան սարը:

Հետո ծտերի երամը թռավ, հետո... Իրոք, հավքերի թագավորություն է Աղոթարան սարը:

Ներքեւում՝ սարվորների մոտ, չոր էր չորս բոլորը: Իսկ այստեղ՝ լեռնագագաթ տանող ճանապարհին, ասես ծաղկի ցուցահանդես է բացվել:

Բայց Աղոթարանը միայն ծաղիկներով չէ, որ պահում է աշխարհը: Այն նաեւ երկինքն է իր ուսերին դարեր շարունակ պահում: Եվ աղոթք է Աղոթարան սարում: Իսկ աղոթքն այդ հայոց զինվորի նվիրումն է, խիզախությունը, անչափելի սերը հայրենիքի ու ժողովրդի հանդեպ: Լեռնագագաթից նրանք հսկում են հայոց սահմանները…

Օրն արդեն մայրամուտ էր թեքվում, երբ հրաժեշտ տվեցինք երկրի արթուն պահապաններին: Վերադառնում ենք տուն: Տունդարձի ճամփին հեռվից նկատեցի նաեւ Կարենին՝ մահակին կռթնած, գիրքը ձեռքին: Տունդարձի ճամփան անցնում էր Սիսիանով: Չէի մոռացել Կարենին տված լուռ խոստումս…

Ահա եւ Սիսիանը: Աղջիկների մեջ հայացքով փնտրում եմ Կարենի ոսկեվարս աղջկան: Ահա ոսկեվարս, չքնաղ մի աղջիկ, արդյո՞ք սա է այն աղջիկը, գուցե այս մե՞կն է Կարենի սրտի թագուհին, իսկ միգուցե այս մյուս ոսկեվա՞րսն է՝ եղնիկի նման, եղնիկի հայացքով... Չգիտեմ, թե որ մեկն է... Բայց մի բան հաստատ գիտեմ. նրա ոսկեվարս աղջիկը պիտի հպարտանա, որ այդքան աղջիկների մեջ Կարենը հենց իրեն է ընտրել:

Իսկ Սիսիանի վրա մայրամուտի արեւն Աղոթարան սարի ծաղիկների բուրմունքով, թռչունների դայլայլով օծված վարսերն էր սփռել...

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Եվ դարձյալ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի կասկածելի ձեռքը...



(Usnrեւ hraparak.am-ի 2017 օգոստոսի 18-ի հոդվածը՝ «Սպիտակի վերելակների գործարանը խանդում-տեղափոխում են Քաջարան» վերնագրությամբ)

Սպիտակի վերելակների գործարանի մասին մենք նախորդ ամիս գրել էինք, որ սկսել են քանդել: Սպիտակցիները դեմ են դրան, ասում են՝ Սովետական Միությունից ժառանգություն մնացած լավագույն կառույցներից մեկն է, սեյսմակայուն, հզոր պատերով եւ թանկարժեք կոնստրուկցիաներով: Մեր հրապարակումները, սակայն, չնվազեցրին գործարանը քանդելու ցանկությունն այն անձանց մոտ, որոնք ձեռք են բերել այդ գործարանը: Սպիտակի վերելակների գործարանը 2008 թվականին ձեռք է բերել Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը եւ աշխատեցնելու փոխարեն որոշել է քանդել այն: Հիմա մետաղական կոնստրուկցիաներն ապամոնտաժում եւ տեղափոխում են Քաջարան՝ այնտեղ իրենց բիզնեսում օգտագործելու կամ որպես մետաղաջարդոն իրացնելու նպատակով: Սպիտակի քաղաքապետն ու քաղաքի ավագանին դեմ են արտահայտվել այս որոշմանը, սակայն դա չի խանգարել, որ կոմբինատի ղեկավարությունը հետ չկանգնի իր մտադրությունից: «Քաղաքապետարանը չի տվել թույլտվություն» հոդվածի հրապարակումից հետո մեզ հետ կապվելով՝ ասել էր քաղաքապետ Գագիկ Սահակյանը: *«Ես հիմա դիմել եմ ոստիկանություն՝ պարզելու համար, թե ով է խանդում»:* Իսկ 2008 թվականին Սպիտակի ավագանին ուղերձով դիմել էր սեփականատիրոջը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ղեկավարությանը, հայտնելով, որ նպատակահարմար չեն գտնում շենքի քանդումը: Սակայն չնայած ավագանու որոշմանն ու քաղաքապետի՝ ոստիկանություն դիմելուն, շենքը քանդում են եւ այս մեկ ամսվա ընթացքում այդ գործում լավ «առաջ» են գնացել: Սպիտակցիները վրդովված են փաստից՝ երեկ եւս նրանք ահազանգեցին, թե «*խանդման աշխատանքները նոր թափ են հավաքել*»: Պայքարողների խմբին է միացել նաեւ Սպիտակի նախկին քաղաքապետ Նորիկ Մուրադյանը, որի օրոք էլ՝ 1989 թվականին, երկրաշարժից անմիջապես հետո, կառուցվել է այս գործարանը: Նա մեզ հետ զրույցում պատմեց, որ վերելակների գործարանը կառուցելու համար ժամանակին Բելառուսից շատ մեծ քանակությամբ՝ մի քանի հազար տոննա մետաղական կոնստրուկցիաներ են բերել Հայաստան, որոնք 9 բալ սեյսմակայունություն ունեն: «*Հիմա լիֆտերի գործարանում մնացել է միայն կարկասը, ներսի եղած-չեղածը թալանել-ծախել են, էդ կարկասն էլ հիմա են խանդում, որ տանեն Քաջարանի պղնձամոլիբդենի կոմբինատ: Տանում են, որ արտադրություն դնեն, 5 տարի է՝ չեն դնում արտադրություն, հիմա էլ խանդում են, որ տանեն-ծախեն*», - ասաց Նորիկ Մուրադյանը՝ նշելով, որ շենքը Քաջարանի կոմբինատը գնել է հենց քանդել-վաճառելու համար, ոչ թե արտադրություն հիմնելու:

Այժմ սպիտակցիները որոշել են նամակով դիմել ՀՀ պետական այրերին՝ ակնկալելով, որ նրանք կկանխեն գործարանի քանդումը: Մասնավորապես, «Սպիտակի մոռացված ժողովուրդ խորհրդի» նախագահ Համլետ Դիլբարյանը իր ՀԿ-ի անունից նամակ է գրել ՀՀ նախագահին, վարչապետին, ԱԺ նախագահին եւ իրենց տարածաշրջանի չորս պատգամավորներին՝ ՀՀԿ-ականներ Արկադի Համբարձումյանին, Կարեն Կարապետյանին, Վահրամ Բաղդասարյանին եւ «Ծառուկյան դաշինքից» Վանիկ Ասատրյանին: «*Եթե պետականությունը կա, պետականության փողերից օգտվողներ կան, հիմա մենք ո՞ւմ դիմենք, որ մեզ օգնեն*», - ասաց պարոն Դիլբարյանը՝ խնդրելով մի բան անել, օգնել, որ գործարանը չքանդվի: Մեր հարցին, թե ինչպես են պատկերացնում գործարանի ճակատագիրը, Հ. Դիլբարյանն ասաց, որ մտադիր են վերագործարկել գործարանը՝ հիմնելով եկամտաբեր արտադրություն. այդ գործարանի նման կառույց աշխարհում շատ քիչ կա:

ՎԱՀԵ ՄԱԿԱՐՅԱՆ

Հարկային մուտքերն աճել են գերավճարների հաշվին

Պետեկամուտների կոմիտեն այս տարվա առաջին կիսամյակում հավաքել է 549.6 միլիարդ դրամ, ինչը 37.6 միլիարդ դրամով ավելի շատ է, քան անցած տարվա առաջին կիսամյակում էր, երբ կոմիտեն ղեկավարում էր Հովհաննես Հովսեփյանը:

Աճի մեծ մասն ապահովվել է հանքարդյունաբերության ոլորտի ընդամենը երեք ընկերությունների եւ մեծահարուստ պատգամավոր Սամվել Ալեքսանյանի անվան հետ կապվող ձեռնարկությունների հաշվին:

Լրացուցիչ 37.6 միլիարդի կեսից ավելին՝ 21.9 միլիարդը, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի», «Գեոպրոմայնինգ գոլդի», «Կապանի լեռնահարստացման կոմբինատի», ինչպես նաեւ «Ալեքս հոլդինգի», «Նատալի ֆարմի», «Ա եւ գ»-ի, «Ալեքս գրիգի» ու «Ալեքս տեքստիլի» նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ավելի վճարած հարկերն են:

Ալեքսանյանի անվան հետ կապվող ընկերությունները գրեթե երկու անգամ ավելի հարկ են վճարել, իսկ հանքարդյունաբերող երեք ընկերությունից գանձված գումարն ավելացել է 2.5 անգամ (2016թ. առաջին կիսամյակ՝ 8.6 միլիարդ դրամ, 2017թ. առաջին կիսամյակ՝ 21.9 միլիարդ):

Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ այս տարվա առաջին կիսամյակում Հայաստանում պղնձի խտանյութի արդյունահանումն ավելացել է ընդամենը 6.9 տոկոսով, իսկ միջազգային շուկայում՝ նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ, պղնձի գներն աճել են շուրջ 20 տոկոսով: Պետեկամուտների կոմիտեի թվերը ցույց են տալիս, որ այս տարվա առաջին կիսամյակում հայաստանյան ընկերությունները 13.5 միլիարդ դրամի գերավճար են կատարել:

Տնտեսագետ Վահագն Խաչատրյանի խոսքով՝ գերավճարներով պետբյուջե լցնելը հայաստանյան հարկային մարմինների արդեն ավանդական դարձած գործելաոճն է:

«Սա այն գործիքն է, որն օգտագործվում է հարկային մարմինների կողմից, երբ որ մեզ փորձում են ներկայացնել, որ հարկային վարչարարության ինչ-ինչ աշխատանքների արդյունքում մեզ մոտ հարկերը հավաքել են ավել», - պարզաբանեց տնտեսագետը:

«Ազատությունը» դիմել էր Պետեկամուտների կոմիտե՝ մեկնաբանություն ստանալու ակնկալիքով, սակայն պատասխան չստացանք:

Վահագն Խաչատրյանի խոսքով՝ գերավճարներն ազդում են հայաստանյան բիզնեսի ու հետեւաբար՝ տնտեսության վրա, որովհետեւ դրանք զրկում են գործարարներին անհրաժեշտ միջոցներից:

«Զուտ ֆինանսական առումով՝ հասկանալի է, որ այդ գումարները կարող էին դառնալ բիզնեսի շրջառու միջոց: Այսինքն՝ որքեսզի այդ միջոցներն ինքը ձեռք բերի, դիմում է ֆինանսական կառույցներին, ֆինանսական կառույցներն անվճար չեն տալիս՝ 6-ից 10 տոկոս լրացուցիչ գումար են վճարում դրա համար», - նշեց Վահագն Խաչատրյանը:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
11 օգոստոսի 2017թ.
azatutyun.am

Նորահայտ կուռք կամ մարդակերպ խանդակ Հարժիսում

Գորիսի տարածաշրջանի այդ գյուղը շարունակում է զարմացնել հնագիտական գտածոներով

Հարժիս գյուղի գործող գերեզմանատանը՝ հողային աշխատանք կատարելիս, ի հայտ է եկել քարակերտ մի նոր հուշարձան, որը մարդակերպ քանդակ է կամ կուռք:

Հուշարձանն առայժմ պահվում է գյուղի դպրոցի հին շենքում գործող արհեստանոցում ու դեռեւս չի հանձնվել Գորիսի երկրագիտական թանգարան: Իսկ դա նշանակում է, որ դեռեւս վաղ է խոսել գտածոյի հնագիտական արժեքի մասին:

Նորահայտ հուշարձանն առիթ է եւս մեկ անգամ ասելու, որ Հարժիս գյուղը բացառիկ է Երկաթի դարին եւ Բրոնզի դարին բնորոշ հուշարձաններով՝ մենհիրներ (ուղղահայաց դիրքով կանգնած այդ քարերը նախնադարյան համայնական դարաշրջանի պաշտամունքային հուշակոթողներ են՝ նվիրված նախնյաց հիշատակին, իսկ որոշ մասնագետների կարծիքով՝ դրանք նաեւ ճանապարհի ուղեցույցներ են), վիշապաքար, մարդակերպ կուռք՝ հնգադեմ (ուշ բրոնզի դարաշրջան), դամբարանադաշտեր…

Նորահայտ կուռքը լրացնում է Հարժիսի սրբազան լանդշաֆտից գտնված հուշարձանների շարքը:

Ի դեպ, վերջերս Հարժիս է վերադարձվել մարդու դիմապատկերով վիշապակոթողը (Քրիստոսից առաջ 2-րդ հազարամյակ), որը Երեւան էր տեղափոխվել տարիներ առաջ եւ ցուցադրվում էր Հայաստանի պատմության թանգարանում կազմակերպված «Քարերը ժողովելու ժամանակը» խորագրով ժամանակավոր ցուցահանդեսում:

Վիշապակոթողն ուղղաձիգ, նեղ եւ բարձր սյուն է՝ իր ձեւով եւ չափով նման վիշապի, նիստերից մեկի վերջնամասում մարդու դիմապատկեր է՝ երկարավուն դեմքով, կիսաբաց բերանով, կանոնավոր դիմագծերով: Վիշապակոթողն առնչվում է պտղաբերության Ֆալլիկ պաշտամունքին եւ սլացիկությամբ ուղղված է դեպի երկինք:

Վիշապակոթողը ներկայումս գտնվում է գյուղի մշակույթի տան բակում:

Մշակութային այդ արժեքների կարեւորությունն ընդգծելու համար հիշեցնենք՝ Երկաթի դարը նախնադարյան մշակույթի այն շրջանն է, երբ մարդը սկսել է երկաթի մշակությունը, իսկ բրոնզի դարը թվագրվում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջից մինչեւ մ.թ.ա. 1-ին հազարամյակ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԱՀԱԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. «Փորձում ենք ջրօգտագործողին բացատրական աշխատանքով բերել վճարման դաշտ»

էջ 1

Գույքագրել ենք եղածը, վեր հանել թերությունները, մեր պահանջները ներկայացրել համապատասխան մարմիններին: Խնդիրները բազում են, մասնավորապես Գորիսի մայր ջրատարը կես դարի վաղեմություն ունի, համարյա սպառել է իրեն, հիմա այստեղ նորոգման լուրջ խնդիրներ ունենք: Եվ այդ նորոգումը միայն մեզնով չէ պայմանավորված, մասնագետներ պիտի գան, ճշտեն նորոգումների մասշտաբները, նաեւ պարզեն, իմաստ ունի՞ նորոգումը, թե՞ այլընտրանք փնտրել:

- Եթե չենք սխալվում, խնդրահարույց է նաեւ Սիսիանի տարածաշրջանի Սպանդարյանի ջրանցքը:

- Այդպես է, դա էլ տասնամյակներ առաջ կառուցված ջրանցք է: Նախատեսված 48 կիլոմետրի փոխարեն արդյունավետ օգտագործվում է 25-ը: Խնդրի մյուս կողմն էլ կա՝ կապված ջրօգտագործողների հետ: Ոռոգման տարեշրջանի հետ կապված՝ ասել եմ, եթե կան առաջարկներ, կարող են ներկայացնել: Մենք ամեն հնարավորն անելու ենք՝ մարդկանց ոռոգման ջրով ապահովելու համար: Այդ խնդրում մեզ ե՛ւ Սյունիքի մարզպետարանն է աջակցում, ե՛ւ ջրային տնտեսության պետական կոմիտեն: Բացի դրանից՝ պարտքերի խնդիր ունեինք, որոնց մի մասը փակվել է:

- Ի դեպ, ներկայացրեք պարտքերի պատկերը, սո՞ւր է դրված այդ խնդիրը:

- Նախկին ջրօգտագործողների ընկերություններն աշխատավարձերի որոշակի պարտքեր ունեին, հարկային պարտավորություններ եւ այլն: Սյունիքի մարզպետարանի, Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամի ու ջրային տնտեսության պետական կոմիտեի աջակցությամբ այսօր աշխատավարձի պարտք չունենք, որոշակի հարկային պարտավորություններ ունենք, որոնք լուծելի են: Այսօր հասել ենք այն մակարդակին, որ, կոորդինացնելով նախկին կոլեկտիվի ուժերը, վարձավճարների հավաքման հուսադրող ցուցանիշ ունենք, սահմանված գրաֆիկով աշխատում ենք:

- Բաժանորդների շրջանում թերացողներ չկա՞ն:

- 15 տարի սպասարկման ոլորտում եմ աշխատում, ուսումնասիրել եմ մարդկանց հոգեբանությունը: Եթե մարդկանց ճիշտ ես ներկայացնում խնդիրը, նրանք գիտակցում են, որ սպասարկման համար պիտի վճարել, եթե խոսքն անգամ ոռոգման ջրի մասին է: Մենք էլ ենք պատկերացնում մարդկանց վիճակը, աննախադեպ երաշտին զուգընթաց եղանակն անակնկալներ մատուցեց՝ կարկուտի տեսքով. կարկտահարվեցին Խոտը, Խնձորեսկը, Սիսիանի տարածաշրջանի որոշ գյուղեր: Վերջերս վարչապետի հետ հանդիպման ժամանակ նա հայտնեց, որ կառավարությունը հստակ որոշում է կայացրել տուժած տնտեսությունների ոռոգման ջրի, հողի վարձակալության վճարները փոխհատուցելու համար:

- Ոռոգման տարեշրջանում Մեղրիում են խնդիրներ լինում, որտեղ ոռոգման մի մասն իրականացվում է մեխանիկական եղանակով՝ պոմպերի միջոցով. ինչպիսի՞նն է այժմ վիճակն այնտեղ:

- Մինչեւ Մեղրուն անդրադառնալն ասեմ, որ նախ ոռոգման ջրի պակասություն արձանագրվեց Սիսիանում, ավելի ստույգ՝ Բռնակոթում: Հարցն օպերատիվորեն լուծեցինք՝ մեխանիկական եղանակով ջուր մատակարարեցինք, պոմպակայանն աշխատեց: Նույնը՝ Գորիսում, որտեղ նախատեսված գրաֆիկից տասը օր առաջ սկսեցինք պոմպակայաններ աշխատեցնել՝ իհարկե, այդ ամենը համաձայնեցնելով վերադասի հետ, քանզի ունենալու ենք էլեկտրաէներգիայի որոշակի գերածախս, բայց չենք կարող անտեսել մեր բաժանորդների շահերը: Նույն խնդիրն առաջացել է Մեղրիում: Այսօր (օգոստոսի 3-ին, խմբ.) հրահանգ եմ տվել Ալվանքում, Շվանիձորում, Նռնաձորում անցնել ոռոգման ջրի մեխանիկական սպասարկման, քանի որ այդ բնակավայրերում ինքնահոս եղանակով ջուր հնարավոր չէ մատակարարել:

- Մեղրիում վերջերս ներդրվել է ոռոգման ջրի մատակարարման ինքնահոս եղանակը, մանավանդ դեպի Ալվանք, Շվանիձոր, Նռնաձոր համայնքները. նորմալ աշխատե՞ց համակարգը:

- Միանշանակ: Անցած տարվա արդյունքներով ոռոգման ջրի ինքնահոս մատակարարման ձախ թեւի (Ալվանք, Շվանիձոր, Նռնաձոր) աշխատելով մենք տնտեսեցինք 60 միլիոն դրամ էլեկտրաէներգիա: Մենք ծրագիր ունենք, որ նաեւ քննարկված է ջրային տնտեսության պետական կոմիտեում. ձախ թեւի 18 պոմպակայանի փոխարեն օգտագործել աջ թեւում գտնվող երկու պոմպակայան՝ սակավաջրության դեպքում:

- Ոռոգման ջրի ներքին ցանցը խախուտ է, սա ասում են ջրօգտագործողները, դա լուրջ խնդիր է, ջուր շատ է կորչում, որքա՞ն են Ձեր կորուստները:

- Մեր կորուստները 25-30 տոկոսի սահմաններում են, բացի Գորիսի տարածաշրջանից, որտեղ առկա են 40-42 տոկոսի թույլատրելի կորուստներ՝ կապված ջրատարի, ներքին ցանցի անմխիթար վիճակի հետ: Բնական է նաեւ, որ Սիսիանի տարածաշրջանում կորուստներ շատ պիտի լինեն, որովհետեւ 600 կմ ներքին ցանցում ընդամենը ոռոգման ջրի 30 տոկոսն է հոսում խողովակաշարի միջով: Ինչ վերաբերում է ներքին ցանցին, ապա շատ տեղերում այն կառուցվել է առանց ջրօգտագործողների ընկերությունների հետ համաձայնեցնելու: Դրանք շահագործելուց հետո լուրջ խնդիրներ են առաջացել. կոմպլեկտավորել, կոլեկտորներ տեղադրել եւ այլն:

- Ձեր բացատրությունները լսելով՝ կարելի է պատկերացնել, որ նախ շատ մտահոգիչ խնդիր է մայր առուների եւ ներքին ցանցի անմխիթար վիճակը:

- Այդպես է, բայց նաեւ չօգտագործված ռեզերվներից են կաթիլային ոռոգումը, գիշերային ոռոգումը: Առաջին դեպքում բույսն ավելի ինտենսիվ է սնվում, երկրորդ դեպքում գիշերն առուն ավելի ջրառատ է լինում: Պիտի ասեմ, որ ջրային ռեսուրսների զարգացման հետաքրքիր պոտենցիալ ունենք, հիմա մենք աշխատում ենք պետության հատկացրած սուբսիդիայով, մի քանի օրենսդրական խնդիրների լուծումից եւ որոշակի ներդրումներից հետո Սյունիքում կարող են վեց-յոթ տարի հետո առանց սուբսիդիայի աշխատել՝ ինքնածախսածածկմամբ:

- Ոռոգման ջրի վարձավճարներին անդրադառնանք: Ասում եք՝ վեց հազար ջրօգտագործող ունեք: Մի ամսվա արդյունքները ներկայացրեք. քանի՞սն են մուծել ոռոգման ջրի վարձավճարը:

- Մի ամսվա կտրվածքով՝ վեց հազարից չորս հարյուրը վճարել է: Ոռոգման ջրի սակագինը մնացել է նույնը՝ մեկ խորանարդ մետրը՝ 11 դրամ, բացառությամբ Մեղրու տարածաշրջանի, որտեղ պետությունը ոռոգման ջրի սակագնի կեսը սուբսիդավորում է:

- Շատ բարի, հետաքրքիր է իմանալ, թե սուբսիդիան քանի՞ տոկոս է կազմում Ձեր ծախսերի մեջ, եւ քանի՞ տոկոս են կազմում սեփական եկամուտները:

- Սուբսիդիան կազմում է 75 տոկոս, մյուս 25 տոկոսն ինքնածախսածածկումն է:

- Ներկայացրեք «Սյունիք» ջրօգտագործողների ընկերության «թիմը»:

- Ընկերության թիմը ժամանակավոր աշխատողների հետ բաղկացած է 130 հոգուց: Նախկին տարածաշրջանային ջրօգտագործողների ընկերությունների տնօրենները մնացել են որպես տեղամասերի պետեր, բացառությամբ «Ղափան» ՋՕ ընկերության նախկին նախագահ Օնիկ Աթայանի, ով, իր դիմումի համաձայն, ազատվել է աշխատանքից: Նախկին ջրօգտագործողների ընկերությունների նվիրված մարդկանց պահել ենք, անմտություն կլիներ նրանցից հրաժարվելը: Օգտվելով առիթից՝ ուզում եմ շնորհակալություն հայտնել կոլեկտիվի մարդկանց, որովհետեւ մեր հաջողությունը թիմային աշխատանքի արդյունք է: Միաժամանակ ուզում եմ երախտագիտություն հայտնել ջրային տնտեսության պետական կոմիտեին, Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանին, որոնք, տեղյակ լինելով մեր դժվարություններին, փորձում են հնարավորինս նեցուկ լինել:

- Իսկ ի՞նչ սանկցիաներ եք կիրառում, եթե ջրօգտագործողների ընկերության անդամն ամիսներ ի վեր ոռոգման ջրի վարձավճարը չի մուծում:

- Սյունեցիները հիմնականում պարկեշտ, օրինապահ մարդիկ են: Իսկ նրանց, ովքեր պարտաճանաչ չեն ոռոգման ջրի վճարները մուծելու խնդրում, ձգտում ենք բացատրական աշխատանքով բերել հարկման դաշտ: Պատժելը մեր աշխատառոճը չէ: Ենթադրենք՝ ջուրը կտրեցինք, ծառը չորացավ, ո՞ւմ ենք վնասում: Սերունդներին ենք պատժում: Իսկ ավելի մարդկային եւ տրամաբանական չէ՞ համոզելով, բացատրելով ջրօգտագործողին բերել վճարման դաշտ: Սա է մեր հիմնական նպատակն ու ամենօրյա աշխատանքը:

Զրույցը՝ **ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

Բժիշկ Սիրակ Սիրականյան. իր գործի գիտակն ու նվիրյալը

Ամուսնուս՝ Սամվել Շիրինյանին, Տեղ գյուղից ծայրահեղ վատ վիճակում հասցրել ենք Գորիսի բժշկական կենտրոնի վիրաբուժական բաժին՝ որովայնի սուր ցավերով: Անմիջապես կատարվել են համապատասխան հետազոտությունները, ինչի արդյունքում հաստատվել է ախտորոշումը՝ սուր գանգրենոզ պերֆորատիվ ապենդիցիտ, տարածում պերիտոնիտ:

Առաջին իսկ պահից հիվանդանոցում արժանացանք պատշաճ հոգատարության Սիրակ Սիրականյանի կողմից, ով Սիսիանի բժշկական կենտրոնի վիրաբուժական բաժանմունքի վարիչն է, եւ այդ օրերին ժամանակավորապես հրավիրվել էր Գորիսի բժշկական կենտրոն (ի դեպ, Սիրակ Սիրականյանը Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիայի անդամ է եւ Սյունիքի մարզում ԵԲՀԱ-ի գործունեության համակարգողն ու պատասխանատուն):

Նույն գիշերը կատարվել է վիրահատություն, որը, շնորհիվ բժիշկ Սիրակ Սիրականյանի պրոֆեսիոնալ գործելակերպի ու բարձր պատասխանատվության, բարեհաջող ավարտ է ունեցել: Եվ ամուսինս դուրս է եկել օրհասական վիճակից: Հիմա մենք տանն ենք: Եվ հետադարձ հայացք ձգելով դժվարին այդ ժամերին ու մեր ապրումներին՝ վերստին հիշում ենք բժշկին ու երախտագիտությամբ լցվում նրա հանդեպ: Փաստորեն կանգնած էինք կյանքի ու մահվան խնդրի առջեւ, եւ բժիշկն ամուսնուս կյանք պարգեւեց:

Գնահատության արժանի է Գորիսի բժշկական կենտրոնի նորանշանակ տնօրեն Սամվել Աֆանդյանի վերաբերմունքը հիվանդների եւ հատկապես ազատամարտիկների հանդեպ, իսկ ամուսինս Արցախյան ազատամարտի մասնակից է, 2-րդ խմբի հաշմանդամ:

Իմ, նաեւ ամուսնուս ու ընտանիքիս մյուս անդամների անունից անկեղծ շնորհակալություն եմ հայտնում Սիրակ Սիրականյանին եւ բժշկական կենտրոնի տնօրեն Սամվել Աֆանդյանին՝ հիվանդանոցում նման մթնոլորտ ապահովելու, ինչպես եւ բժշկական բարձրորակ ծառայություն մատուցելու համար:

ԷԼՎԵՐԱ ԵՒՐԻՆՅԱՆ (ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ)
գյուղ Տեղ

«Գանձասար-Կապանը» կրեց երրորդ անընդմեջ պարտությունը



Օգոստոսի 19-ին Երեւանի «Հանրապետական» մարզադաշտում կայացավ Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 3-րդ տուրի հետեւյալ հանդիպումը՝ «Գանձասար-Կապան»-«Շիրակ», որ ավարտվեց 0:1 հաշվով:

Մինչ այդ օգոստոսի 11-ին կայացած Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 2-րդ տուրի «Փյունիկ»-«Գանձասար-Կապան» հանդիպումն ավարտվել էր 2:1 հաշվով:

Իսկ օգոստոսի 6-ին կայացած Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 1-ին տուրի «Գանձասար-Կապան»-«Արարատ» հանդիպումը նույնպես ավարտվել էր պարտությամբ՝ 1:3 հաշվով:

Սեփ. լրատվ.

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Հայտարարվում է 2017/2018 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելություն՝ հետևյալ մասնագիտությունների գծով

Մասնագիտություններ	Ընդունելության քննություններ				Ազդ. տեղերի թիվը	Ուսման վարձը (հազ. դրամ)
	Մրցութային			Ոչ մրցու թային		
Կենսաբանություն	Կ(գ)	Բ(գ)** կամ Ֆ(գ)**		Հ(գ/գ)*	15	200
Քիմիա	Ք(գ)	Կ(գ)** կամ Ֆ(գ)**		Հ(գ/գ)*	10	200
Պատմություն	ՀԺՊ(գ)	Օտ(գ)կամ ԸՊ(գ)		Հ(գ/գ)*	25	270
Իրավագիտություն	Հ(գ/գ)	ՀԺՊ(գ)	Օտ(գ)		30	380
Հայոց լեզու և գրականություն	Հ(գ/գ)	Հ(գ/գ)			25	220
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հ(գ/գ)	Մ(գ)**			30	240
Կաբավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հ(գ/գ)	Օտ(գ)		30	280
Էլեկտրաէներգետիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հ(գ/գ)*	30	210
Ֆիզիկա	Ֆ(գ)	Մ(գ)**		Հ(գ/գ)*	15	200

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 25-ը:

Դիմում-հայտի հետ ներկայացվում են՝

1. միջնակարգ կրթության ատեստատը, միջին մասնագիտական և մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթը (բնօրինակը),
2. 6 լուսանկար (3x4 սմ չափսի),
3. անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական),
4. զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունը անցնելու մասին,
5. արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաև զինծառայող ծնողի զոհվելու մասին, առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին),
6. միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները,
7. 2016թ. ավարտական միասնական քննությունների վկայագիր,
8. փաստաթղթերի ընդունման, ձևակերպման համար 1500 դրամ և յուրաքանչյուր քննության համար 1500 դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը (արտոնություններից օգտվող դիմորդները ազատվում են ընդունելության քննությունների վճարից):

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098196712, 077802277
Հասցեն՝ ք. Գորիս, Ավանգարդ 2
ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2017/2018 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Մասնագիտություններ	Ընդունելության քննություններ	Ազդ. տեղերի թիվը (մնացած)	Ուսման վարձը (հազար դրամ)
Տեղեկատվական տեխնոլոգիաներ		15	270
Հանրակրթական մանկավարժություն և մեթոդիկա	1	10	270
Կենսաբանություն	1	5	220
Մաթեմատիկա	1	10	220
Պատմություն	1	10	300
Հայոց լեզու և գրականություն	1	10	250
Տնտեսագիտություն	1	15	350

Դիմում-հայտի հետ ներկայացվում են՝

1. Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ և դիպլոմի հավելված)
2. 4 լուսանկար (3x4 սմ չափսի),
3. Անձը հաստատող փաստաթուղթ ,
4. Ինքնակենսագրություն

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098196712, 077802277
ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2017/2018 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Մասնագիտություններ	Ընդունելության քննություններ	Ազդ. տեղերի թիվը (մնացած)	Ուսման վարձը (հազար դրամ)
Տեղեկատվական տեխնոլոգիաներ		15	270
Հանրակրթական մանկավարժություն և մեթոդիկա	1	10	270
Կենսաբանություն	1	5	220
Մաթեմատիկա	1	10	220
Պատմություն	1	10	300
Հայոց լեզու և գրականություն	1	10	250
Տնտեսագիտություն	1	15	350

Դիմում-հայտի հետ ներկայացվում են՝

1. Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ և դիպլոմի հավելված)
2. 4 լուսանկար (3x4 սմ չափսի),
3. Անձը հաստատող փաստաթուղթ ,
4. Ինքնակենսագրություն

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098196712, 077802277
ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«ԽՈՒՍՏՈՒՓ» ՎՐԱՆԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Խուստուփ» վրանային ճամբարը գտնվում է Սյունիքի մարզի Շիշկերտ գյուղից 1 կմ վերեւ՝ դեպի Խուստուփ:

Վրանային ճամբարում մեկօրյա հանգիստը մեկ անձի համար կազմում է 5000 դրամ, որն իր մեջ ներառում է՝ գիշերակաց վրանում, քնապարկ, քնապարկի տակդիր, լապտեր, գամակ, ծածկոց, խորովածի համար նախատեսված կրակարան (ներառյալ վառելափայտ), հանգստյան տաղավար, կոմունալ պայմաններ, թեյի, սուրճի պարագաների անվճար տրամադրում, շուրջօրյա հսկողություն՝ պահպանության աշխատակիցների կողմից:

Վրանային ճամբարում հանգստացողների համար Խուստուփ տանող երթուղին ավտոմեքենայով արժե 12.000 ՀՀ դրամ:

Վրանային ճամբար-Խուստուփ լեռ-վրանային ճամբար, ընդհանուր տեւողությունը՝ 3 ժամ՝ ներառյալ հանգիստ:

Մինչեւ 10 տարեկան այցելուների համար կիրառվում է 50% զեղչ:

Գնացուցակում առկա գները ներառում են ԱԱՀ:

zangezurkh.am

Կորել է Արսեն Ռոբերտի Սարգսյանի՝ Կենտրոնական բանկի կողմից տրված թիվ 7076 հաշվառման վկայականը:

ՏՈԼՈՐՍԻ ՋՐԱՍՈՒՅԶ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՈՐԻՑ ՀԻՆԵՑՆՈՒՄ Է ԻՐ ՄԱՍԻՆ

Երբ 1974 թվականին շահագործման հանձնվեց Տոլորսի ջրամբարը, ջրի տակ անցան Տոլորս եւ Աշոտավան գյուղերի եկեղեցիները:

Երկու եկեղեցին էլ հավանաբար կառուցվել են 19-րդ դարում:

Ջրասակավ տարիներին՝ ջրամբարում ջուրը սովորականից շատ պակասելու (իջնելու) դեպքում, լճակում «գլուխ են բարձրացնում» այդ եկեղեցիները:

Թեեւ մեղավորներիս կամքով ջրի տակ են ու անարգված. բայց կանգուն են եւ պահպանում են այն տեսքը, ինչ վիճակում ջրասույզ են արվել ժամանակին:

Այս տարի եւս ջրի մակարդակն իջել է, եւ կրկին վերահառնել են եկեղեցիները:

Ահա եւ Տոլորսի Սուրբ Հռիփսիմե եկեղեցին, որին ականատես եղանք օրեր առաջ:

Այցելեք Տոլորս եւ գոնե հեռվից հաղորդվեք Աստծո վերահառնած տաճարի հետ, որը ժամանակ անց կարող է եւ տեսանելի չլինել…

«Սյունյաց երկիր»

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 24.08.2017թ.: